



Սրբոց Ղևոնդյանց քահանաների հիշատակության օրը բոլոր քահանաների տոնն է:

2017 թվականի փետրվարի 21-ին Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցում, հանդիսապետությամբ Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի, տեղի ունեցավ տոնական Սուրբ և Անմահ Պատարագ: Օրվա պատարագիչն էր Ախալքալաքի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Եղիշե ավագ քահանա Հարությունյանը: Պատարագին ներկա էին Ախալցխայի տարածաշրջանի հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տեր Հակոբ աբեղա Սահակյանը, Դամալայի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Եղիա ավագ քահանա Թազայանը, Ախալքալաքի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարուքյանը, Նինոծմինդայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանը, Դիլիսկայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տիգրան քահանա Մխիթարյանը, Արագովայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Թադեոս քահանա Տեր-Մկրտչյանը, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցու լուսարար Բարեշնորհ Աթանաս սարկավագ Կիրակոսյանը:

Հընթացս Սուրբ Պատարագի ողջույնի խոսքով հանդես եկավ Արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարությանը, Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդության ամբողջ հոգևոր դասին շնորհավորեց տոնի կապակցությամբ և փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությունը և բարեմաղթանքները: Այնուհետև Հոգեշնորհ Տեր Հակոբ աբեղա Սահակյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ Պատարագի Հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանը շնորհավորեց հոգևոր դասին տոնի առիթով, մաղթելով անսասան ծառայություն ի փառս Աստծո և ի շինություն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու:

Ղևոնդյան քահանաներն Ավարայրի ճակատամարտում սրբացած քաջորդիներն են: Նրանք քայլում էին հայոց բանակի առջևից և իրենց բոցաշունչ խոսքերով քաջալերում, ոգի ու ուժ հաղորդում Քրիստոսի եկեղեցու և հայոց ինքնության համար պարսից զորքերի դեմ ուղի ելած հայ մարտիկներին: Տոնը կոչվում է Ղևոնդյանց՝ ի պատիվ Ղևոնդ Երեցի, ով տարիքով ամենամեծն էր: Վարդանանց հերոսամարտից հետո պարսից Հազկերտ արքան վրեժխնդիր եղավ հայոց քաջերից: Նրա հրամանով նահատակվեցին հայոց քաջարի հոգևորականները: Հազկերտ թագավորը համոզվում է, որ անհնար է հայ մարդուն կտրել իր Եկեղեցուց և քրիստոնեական հավատից:



